

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ 2020

### Համառոտ տեղեկանք

#### COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

COVID-19 համավարակի բերած ճգնաժամը ողջ աշխարհում ծանր ազդեցություն ունեցավ մարդկանց, համայնքների և տնտեսությունների վրա:

Մինչ երկրները արգելափակումներ են կիրառում, իսկ առողջապահական համակարգերը լուրջ փորձության են ենթարկվում, բնակչության հատկապես խոցելի խմբերը հայտնվում են է՛լ ավելի ծանր կացության մեջ: Լրջորեն վտանգվում են հատկապես խնամքի հաստատություններում տարեցների կյանքն ու առողջությունը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, տարեցների խնամքի հաստատությունների բնակիչներին է բաժին ընկնում Եվրոպայում նոր կորոնավիրուսից մահերի գրեթե կեսը:


Լուրջ փորձության են ենթարկվում նաև երկրների ժողովրդագրությանն առնչվող ծրագրերը, այդ թվում՝ հերթական մարդահամարների անցկացումը, ինչը 2020-2021 թթ. նախատեսում է անել աշխարհի 150 երկիր, ներառյալ՝ Հայաստանը: Առկախման վտանգի տակ են հայտնվում ընտանիքների վերարտադրողական ծրագրերը:

Վերարտադրողական և սեռական առողջության ծառայությունները մի կողմ են մղվում, իսկ գենդերային բռնությունն աճում է: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) հետազոտությունները ցույց են տալիս, որ եթե մեկուսացումը շարունակվի վեց ամիս, ապա կարելի է ակնկալել աշխարհում գենդերային բռնության հավելյալ 31 միլիոն դեպք: Համավարակի պատճառով ՄԱԲՀ ծրագրերի խաթարումը կարող է 2020-2030 թթ. հանգեցնել մանկահասակների հավելյալ 13 միլիոն ամուսնության:


Միայն այս խնդիրների կարևորության գիտակցումը, միջոցների ներդրումը և համատեղ, հետևողական աշխատանքը կարող են բարելավել իրավիճակը:

#### ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների, աշխարհի բնակչությունը շարունակելու է աճել:



Այդուհանդերձ, ծնելիության գումարային գործակիցը շարունակելու է նվազել:




Աշխարհի բնակավայրերի մոտ կեսում (ներառյալ Հայաստանում) ծնելիությունը 2.1-ից՝ պարզ վերարտադրությունից, ցածր է:

Աշխարհի բնակչությունը նաև կշարունակի ծերանալ. ներկայի 11-ից 1-ի փոխարեն 2050 թ.-ին աշխարհում տարեց կլինի յուրաքանչյուր 6-ից մեկը: Միաժամանակ, կբարձրանա կյանքի սպասվելիք միջին տևողությունը՝ 73-ից հասնելով 77-ի:


### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերջին հրապարակման՝ 2020 թ. հունվար-մայիս ամիսներին Հայաստանում նվազել է ինչպես ծնվածների, այնպես էլ մահացածների թիվը: Հայաստանը մոտենում է այն փուլին (սկսած մոտավորապես 2025 թ.-ից), երբ վերարտադրության ամենամեծ բաժինն իրենց վրա կվերցնեն 2000-ականների սկզբին ծնվածները, որոնց թիվն ամենափոքրն է եղել նորանկախ Հայաստանի պատմության ընթացքում: Արդյունքում ակնկալվում է ծնունդների թվի որոշակի նվազում:




Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե մեկ երրորդով կրճատվել է ամուսնությունների թիվը, մոտ 300-ով՝ ամուսնալուծությունների թիվը: Ըստ


ամենայնի, ամուսնությունների թվի նման նվազումը կապված է COVID-19 համավարակի հետ:




Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ 2050 թ.-ին ծնելիության գործակիցը Հայաստանում մի փոքր աճած կլինի:



Եթե այլ որոշիչ գործոններ տեղ չգտնեն, Հայաստանի բնակչությունը, ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների, մի փոքր աճից հետո կշարունակի նվազել:



Հայաստանում կշարունակի աճել տարեց բնակչության մասնաբաժինը, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է շուտափույթ քայլեր իրականացնել մեր տարեցների հորքան հնարավոր է առողջ, ունակ և պահանջված պահելու, նրանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն ապահովելու համար:



Հայաստանում կաճի նաև կյանքի սպասվելիք միջին տևողությունը:

